30. ԿՆԻԿԸ ՁՈՐԻԻ ՓՈԽԱՐԿՎԱԾ

Կէղնի, չէղնի էրկու մարդ՝ մեկ կաթրչի, մեկ էլ ծիավոր: Հէլան որ գնան քաղաք. ճամբախ մե խատ կամչին տեսան. կաթրչին ծիուց իջավ ցածր, մեկ ծեր մեկ բռնեց, մեկել ծեր՝ մեկ, կռիվ խանեցին վրեն: Ձիավոր կաթրճուն ասաց. - Աղբեր ղադրը, արե, խետ քե բան անենք. նստի կսա անենք, վիր գլոխ շատ փորձանք իկի, կամչին տանք ինոր:

Ձիավոր ասաց. - Ես է՛լա, գնացի քաղաք, չարշու-պազար կան էկա, մեկ մարդ ձիկ կանչեց. «Դա տղա, դա տղա, արի, էլի ձիկ մշակ»:

- Շատ աղեկ կէղնի, - ասի:

- Մկա գնա, հեվարին արե, հետ քե էրթանք մեր տուն:

Հեվարին էկա, գնացինք տուն, խաց կերանք, պարկանք: Էս տեղ մեկ խորոտ աղջիկ կեր, էդ աղջիկ, մեկ կնիկ էկան:

Մարդն ասաց. - Կը տեսնա՞ս, էս իմ կնիկն ա, էս իմ աղջիկ, արե, իմ աղջիկ տամ քե, իմ պիթուն ունեցածս վեր քե իպա անիմ, քե անիմ ձիկ փեսա, լաճ ու խոր պես ապրինք:

- Շատ աղեկ կանես, - ասի:

Էլան, կանչեցին, տերտեր բերին, պսակ արաց:

Մարդ դյուս էլավ, գնաց. ես իմ շորեր խանեցի, մտնեի մեջ տեղաց, մեկմ՝ էլ տեսա օր դուռ տփեցին. էդ դուռ տփողն էդ մարդն էր*, ասաց. - Տղա, տղա, արե, խալավներ խագի, ճվալներ առ, էրթանք մե տեղ օսկի ինք լցի, բերինք, սորա մտնիս քո կնկա ծոց:

---

* Յուր աներ (ծ.բ.):

էլանք գնացինք, սարիմ ըռասթ էկանք, էնտեղ խոր մի կեր, բերան բաց, մարդը ասաց. - Արե, էճի էս խորի մեջ, էս ճվալներ կը տամ քե, դու լից մեջ իսունց. օսկիք, - ասաց ծիկ, - օր չվանով քաշեմ, վեր կէլնիս դյուս, կը բառնանք ջորիներաց, կը տանինք:

Գնացինք, ես էջա խոր, տեսա օր մեջ լցուն օսկի էր, ես էն չվալներ լցի, տվի դյուս, խլըսանք. չվան կախեց, ես դյուս էկա տեսա մեկ չվալ մնացեր էր խորու տակ, էն մարդ ասաց ծիկ. - Դա տղա՛, էջիր, էն մեկել լից:

էլանք, ճվալներ պառցինք, ես էջա խոր, էդա մեկն էլ լցի, տվի, դյուս քաշեց, չվան էջուց, ծիկ էլ քաշեց չուր խորի կես, չախուն թալեց, չվան կտռեց. ըոկա մեջ էդա օսկիքտերաց. - կաթըրճի, լավ ականջ էրա:

Մեջ խորին գնացի էստեղ, էնտեղ, տեղ մը չըգնտա. դու մի ասի, էդա խորի տեր մարդասպան ա, շատ մարդեր էդ օսկիյտերաց խամար սպաներ, թալեր էր խոր:

Տեսա մեկ արջ, խորի տակ մեկ ծակ կա, էդ ծակից կուգա, ամեն լեշեր կուտի, ես էլ երբ կը ֆռֆռի էդտեղ, հընկա էդ արջու էտևեն, լարեցի, լարեցի, չուր էլա լյուս աշխարի:

Տյուս պտըտեցի դես, պտըտեցի դեն, էկա քաղաք, գնտա դյուքաննների առեջ էլմ էն մարդ.էդա մարդ ծիկ տեսավ, խանչեց, ամա ծիկ չճանչցավ. խարցուց ծիկ. - Դա ղա, ի՞նչ տղա իս:

- Աղքատ տղա իմ:

Ասաց. - Գնա, դորմ՝ արե՛, քե տանեմ մեր տուն:

Խոսացինք էլի առջի դրուն պես:

Գնացի տուն, տեսա խացին հետ մեկ կնիկ, մեկ աղջիկ էկան (կաթրճի, լավ ականջ էրա, էս աղջիկ իմ կնիկն ի):

- էս իմ աղջիկն ա, - ասաց էն մարդ, - արե, վեր քե պսակեմ, դու էլի ծիկ տղա, ես էլլիմ քե խեր, մեկ տեղ ապրինք, իմ մալ, թամալ գմեն կանեմ վեր քե:

Պսակեց, խարսնիսն արինք, առջի գիշեր, որ խանի շորերս, պտի մտնինք դոշակ՝ համան դուռ տփեցին, էլմ էն մարդ ասաց. - էլի խալավ-ներդ խագի, կաթրներն առ, էրթանք ֆլան սարի տակ, օսկի կա, առնինք, գանք. էտև արե, աղջկա խետ քնիր:

էլանք, գացինք էն խորի վերեն. էջա առաջվան պես, լցի չվըլներ, խանեցի դյուս, ես էլ դյուս էկա, տեսա մեկ չվալ դառտակ մնացեր էր:

- Դա տղա, - ասաց, - էջի, էս մեկ չվալն էլ լցիր, առնենք, տանինք:

Ասի. - Չէ, ծիկ կտռտես, սպանես, էլ չեմ էջնի, էս էլ դյու էջի. խո աշ-խարիք չավիրի:

Մարդը էջավ, լցեց չվալ, չվան էջուցի, քաշեցի. մատավ ջուր կես տեղ, դանակ թալեցի, չվան կտռեցի, գնաց խորի մեջ. ես էլ իմ կաթռներ պարցի, էկա տուն: Մեր, աղջիկ էկան իմ դեմ, ասին. - Հո՞ւր ա մեր մարդ, հո՞ւր ա մեր խեր:

Ասի. - Ձարկեցին, սպանեցին:

Էստեղ ես էն տան վերեն մնացի, աղջիկն առի, նստա. էս հարստությունն էն տեղեն ի մնացեր ի. մկա ես իմ խեքաթն պրծա, դորիս դու ասա:

Ասաց. - Ձիավոր աղբեր, լավ ականջ արա, ծիկ մեկ թախմ ծիեր ունի, օր մեկ մեկելից քահլան էր, ամեն կոնից ջոկ-ջոկ, որ ամեն վիր որ ծի պետք էղներ, գուգեր, ինձանից կառներ, իսուր խամար շատ սեիսներ պռնեցի, խարիրիցն ավելի, էդ սեիսներ ծիանք աղեկ չպախելու խամար վզքըներ կտրեցի, դորիս մեկ արաբ սեիս պռնեցի, մեկ ժամանակ էդ սեիս մնաց իմ մոտ: Դու մ'ասի, իմ կնիկ զմեն օր տնից կէլնի, ծիներ կը խեծնի, գողտիկ կէրթա սիրականի մոտ. իդոր խամար իմ ծիեր չէին կլավնա, ինուր խամար ես էդքան արընի տակ մտա. առանց էս բան գիտնալու: Ձիավոր ախպեր, լավ ականջ էրա, - ասաց:

Մեկ գիշեր էկավ սեիս, ծիկ ասաց. - Աղա, աղա, էլի, տես, քյո կնիկ դոր գնաց:

Էլա, տեսա օր բոզ ծին ի խեծեր, գնացեր, ասի. - Սեիս, սև ծին ծի խամար քաշե դյուս:

Սև ծին քաշեց, թամքեցի, խեծա քամկից գնացի, գնացի, տեսա մեկ քարոտ դաշտի մեջ, պաղ-ցուրտ ծմեռվա ժամանակ որ իմ ծին քելա, իմ խոգին կը մղկտա. տեսա էդ տեղ մեծ կոնախներ կա, մեջ օդեք շինուկ, իմ ծին կնիկ կապեր ի դուռ, գնացեր ի ներս, էդ պաղ սառուցներու վերեն ծիու ոտներ սառելու մոտ ի: Իս էլ էչա ծիուց, կապեցի իդոր կուշտ, մտա ներս, տեսա օր մեկ խատ արաբ մը կա օր մեկ պռուկ էրկինքն ի, մեկ պռուկ գետինքն ի:

Առջի դռնեն մտա սրախի մեջ, տեսա որ իմ կնկան ասաց. «Էտե պոզ կնիկ, դու էսօր ինչի՞ անգան էկար»: Կնիկս էլ կասեր. «Ի՞նչ անեմ, սկուն էլավ»: Էն գախ էնի տարավ իպի մեկ խատ շամառ իտու իմ կնկան իրեսին, օր իրեսից կրակ թռավ իմ խոգին էլ մղկտավ, իս ծիկ ասի թե՝ «Այ անօրեն, իս էս կնիկ յոթը տարի առեր իմ, մեկ ծանտր, թթու չ'ասերիմ, էս ինչպես կը զանի»:

Տեսա օ կնիկ նստավ էնտեղ, լացավ. արաբն էլ օսկի իպրիղ լականը առավ, իլի դյուռ լվացվի. իս էն տեղ ծիկ տվի դռան տալտեն, իմ Աստուծու անուն տվի, իմ թուր կալանից քաշեցի, օտաց մատների վրեն կայնա,

զարկի, էդ սև արաբի գլոխ կտռեցի. գլոխ գնաց դռնեն տյուս, ջանդակ մնաց ներս: Ես էն տեղեն շուտմ՝ իմ ձին քաշեցի, խեծա, փախա էկա, իմ տուն էչա, ձին թասլիմ արի սեիսին, իմ շորեր շուտ-շուտ խանա, մտա իմ տեղ:

Տեսա օր իմ կնիկ, էդ արաբի գլոխ դրեր ի մեջ օսկի սինուն, լալով, կոռալով էկավ, մտավ ի ներս: Ես իսկի չիշխնամ խոսա, իսկի ձիկ էն տեղ չիմ դնի: Ութն օր, տասն օր լացավ, կոռաց, չուր գլոխ խոտավ, տաս օրից սորա ասի. - Այ կնիկ, խերիք չէլա՞վ, օր դու լաս, կոռաս էդ չար գլխի վերեն:

Էս խոսք իմ բերանս էր, մեկ էլ տեսա կնիկ դոշակի տկեն ճպոտմ խանեց դյուս, էզարկ ձիկ, ասաց. - Այ շուն, շուն դառնաս՝ իյնաս աշխարի պտըտիս: Ձիավոր ախպեր, - ասաց կաթրճին, - լավ ականջ էրա: Ես մնացի շուն յոթը տարի. մեկ օր մեր քավոր տերտերի դուռ գնացի, տեսա օր խաց կը թխեն, տիրուխնին ասաց. «Առ էս խացերը, լից շան, վայ-վայ, մեղք ի»: Տերտեր ասաց. «էս ո՞վ ա օր դու կը մեղքընաս»:

Ասաց. «Մեր սանախերն ա, ... որ իր կնկան արաբ սիրական գնաց, սպանեց, էն էլ ինատու ճպոտով զարկաց, իսուր արաց շուն. մկա էս յոթ տարի ա, շուն ա էս խեղճ»:

Ասաց տերտեր. «Կնիկ, իսուր ճարմ չկա, ճարը ի՞նչ ի»:

«Իսուր դեղ յոթ տարվան անծին էրջնիկ ի »:

- Իս ո՛ր տեղեն յոթ տարվան անծին էրջնիկ բրիրիմ:

«Դե իմ խերանց նախիր էն դարն ի, մեկ հատ ինոնց մեջ կա, գնա, առ, արի»:

Տերտեր գնաց, առեց էկավ:

Գնաց, պիրեց մե խատ կսապ, մորթեց, օճախներ շինեց, պղինձներ շարեց վերեն, միս կտռտելեն սորա, լցեց մեջ պղնձներաց, վառեց, իփեց, էնպես իփեց, օր իդոր օսկոռներն էլ խալավ, էլավ ջուր, իմ ձեռ ոտ պռնից, կնիկ էլ ճխտից էդ եռման ջրին, Աստուծո սուրբ շնորքով իս էլ էլա աշխար մարդ:

Նստանք, խորհեցինք թե ինչպես կէղնի, ինչպես չէղնի՝ գնտանք էս խորհուրդ, օր իս էլ էլնիմ չարչի, ուլնինք, շուշե, ճոթ առնիմ, ֆռալով էրթամ, էն քաղաք ման գամ:

Գնացի, տեսա իմ կնիկ, էդոր խզմեթճիք դյուս էկան, ասի. - Խանըմ, շուշե բան չա՞ռնիս:

Խանըմ իզի կանչեց վերև, գնացի վեր, տեսա օր կընա էդ չոր գլոխ հանած դրե էդ մեջ սինուն, վերեն կուլա, կը կոռա:

Իս իմ աչքեր ման տվի չորս կողմ, տեսա էն ճպոտի մեկ ծեր դոշակի տկեն էրևաց. իս մոտացա, մոտացա, քաշեցի ճպոտ, առի գաղտիկ, դրի իմ փեշի տակ: էդ օր պազար արեց, պրծավ, ճպոտ վերցուցի, զարկի կնկան, ասի. - Դու կաթր իր, կաթր դարձի:

Իմ կնիկ էլավ մե կաթր, թե չիս հավատա, տես որ էս իմ կաթր իմ կնիկն ա, տես, հալա արտսունք աչքերից թափում ա:

Ասաց կաթրճին. - Դե, ճիավոր ախպեր, մկա կռպաճ ճիկ կը խասնի թե՝ քե:

- Իս խալթ իմ արի, կռպաճ քե կը խասնի, - ասաց:

Կաթրճին գնաց, ասաց. - Մարդ թող իր կնկան իսկի չասի, թե լավ ա, կատարյալ ա. ահա կնկան ամենալավը իմ կնիկս էր, ինչ տեսակ էլավ: